ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Աշխատանքի ծածկագիր 81881

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

21.07.2023թ.

Բարձրագույն դատական խորհրդի 13.07.2023 թվականի թիվ ԲԴԽ-71-Ո-221 որոշմամբ կազմավորված դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների արդյունքների բողոքարկման հանձնաժողովը *(այսուհետ՝ Հանձնաժողով)*

կազմով՝
Բարձրագույն դատական խորհրդի անդամ **Երանուհի Թումանյանցի,**
Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ **Արսեն Հովհաննիսյանի,**
Արդարադատության նախարարության ներկայացուցիչ **Տիգրան Խաչիկյանի,**

քննելով դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով 2023 թվականի հունիսի 28-ին անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված թիվ 81881 ծածկագրով բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Բողոքաբերի կողմից բողոքարկվել են 1-ին,2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրները:

Հանձնաժողովը Բողոքաբերի կողմից վկայակոչված 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրներ մասով արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից խնդիրներում նշված պատասխանների, իրավանորմերի, ինչպես նաև դրանց վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումների վերաբերյալ բողոքում նշված հիմնավորումները չեն բխում ՀՀ քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով ամրագրված վերաբերելի իրավակարգավորումների տրամաբանությունից, ինչպես նաև նշված հարցերի ուղենիշային պատասխաններից, հետևաբար Հանձնաժողովը գտնում է,

որ Գնահատման հանձնաժողովի կողմից հիշյալ խնդիրների վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները ենթակա չէ բարձրացման:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, բողոքը քննելով ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, արձանագրում է, որ այն հիմնավոր չէ և ենթակա է մերժման, ուստի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրների վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները անհրաժեշտ է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 02.02.2023 թվականի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 81881 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել, 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ խնդիրներ վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները թողնել անփոփոխ. արձանագրել, որ թեստային բոլոր առաջադրանքների ընդհանուր հանրագումարային միավորը 48 միավոր է, իսկ խնդիրներինը՝ 12 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ